ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-22-10/6-1

ք. Երևան 23-ը փետրվարի 2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Կ. Բրուտյանի**, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԳԻՊԱՐ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Ա. Արտաշեսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման, փորձարկման ծառայությունների*** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի **N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին** համապատասխան և սահմանված ժամկետներով ***(ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած):***

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

---

[18] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է, որը կազմում է **1 408 322** (մեկ միլիոն չորս հարյուր ութ հազար երեք հարյուր քսաներկու) ՀՀ դրամ:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, որը կազմում է **1 380 000** (մեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[21] *Քանի որ պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ***12*** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում

7.16 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչությունը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Գիպար ՍՊԸ»
ք. Երևան Բագրևանդի 5	Արարատի մարզ գ. Այնթապ 5 շարք 19 տ.
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570050758640100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 04232687
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-22-10/6-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

Հ/հ	Ծառայության անվանումը, CPV կոդը	Հիմնավորում	Ծառայության առանձին տեսակների անվանումները	Չափման միավորը	Պլանավորված միավորի գինը, ՀՀ դրամ
1	**Գազաարքա վորումների վերանորոգում, կարգաբերում, փորձարկում CPV կոդ՝ 50531151/501**	Կ19-5	Հոսքային ջրաջեռուցիչի տեղադրում, վառելիքը գազ /առանց նյութերի արժեքի/	հատ	8.399
2		Կ19-6	Ծավալային ջրաջեռուցիչի տեղադրում, վառելիքը գազ /առանց նյութերի արժեքի/	հատ	13.723
3		Կ19-8	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 5խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	11.652
4		Կ19-9	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 10խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	14.844
5		Կ19-10	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 30խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	18.545
6		Կ19-11	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 50խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	24.398
7		Կ19-12	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 80խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	29.074
8		Կ19-13	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 120խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	33.550
9		Կ19-14	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 180խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	39.710
10		Կ19-15	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 250խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	45.725
11		Կ19-16	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 350խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	52.890
12		Կ19-17	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 500խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	63.710
13		Կ19-38	Գազայրիչների բլոկի տեղադրում, արտադրողականությունը մինչև 15խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	13.927
14		Կ19-39	Գազայրիչների բլոկի տեղադրում, արտադրողականությունը մինչև 30խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	16.441
15		Կ19-40	Գազի ճնշման փոփոխման սարքավորման /պահարանային կայանք/ տեղադրում /առանց սարքավորման արժեքի/	հատ	32.640
16		Կ19-41	Գազի ճնշման կարգավորիչի տեղադրում, տրամագիծը մինչև 50մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	11.719
17		Կ19-42	Գազի ճնշման կարգավորիչի տեղադրում, տրամագիծը մինչև 100մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	20.896
18		Կ19-43	Գազի ճնշման կարգավորիչի տեղադրում, տրամագիծը մինչև 200մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	42.857
19		Կ19-44	Ապահովիչ կափույրի տեղադրում, տրամագիծը մինչև 50մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	5.965
20		Կ19-45	Ապահովիչ կափույրի տեղադրում, տրամագիծը մինչև 80մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	11.394
21		Կ19-46	Ապահովիչ կափույրի տեղադրում, տրամագիծը մինչև 100մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	13.466
22		Կ19-47	Ապահովիչ կափույրի տեղադրում, տրամագիծը մինչև 200մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	28.640
23		Կ19-48	Ապահովիչ կափույրի տեղադրում, տրամագիծը մինչև 300մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	48.497
24		Կ19-49	Հակապայթուն կափույրի տեղադրում, մակերեսը մինչև 0,1 քմ /առանց նյութերի արժեքի/	հատ	18.980
25		Կ19-50	Հակապայթուն կափույրի տեղադրում, մակերեսը մինչև 0,2 քմ /առանց նյութերի արժեքի/	հատ	23.674
26		Կ19-51	Հակապայթուն կափույրի տեղադրում, մակերեսը մինչև 0,25 քմ /առանց նյութերի արժեքի/	հատ	26.450
27		Կ19-52	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 80 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	9.523
28		Կ19-53	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 100 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	11.219
29		Կ19-54	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 150 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	16.093
30		Կ19-55	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 200 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	22.982
31		Կ19-56	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 250 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	32.401

32	Կ19-57	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 300 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	36.492
33	Կ19-58	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 400 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	42.035
34	Կ19-59	Գազի զտիչի /մեխանիկական խառնուկներից/ տեղադրում տրամագիծը մինչև 80 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	12.694
35	Կ19-60	Գազի զտիչի /մեխանիկական խառնուկներից/ տեղադրում տրամագիծը մինչև 100 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	14.284
36	Կ19-61	Գազի զտիչի /մեխանիկական խառնուկներից/ տեղադրում տրամագիծը մինչև 200 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	27.593
37	Կ19-62	Միացում գազատար խողովակին խողովակապտուկով Φ15մմ-ոց փականի տեղադրումով /առանց նյութերի արժեքի/	հատ	1.775
38	Կ19-63	Միացում կրակախցին խողովակապտուկով Φ15մմ-ոց գազի ծորակի տեղադրումով /առանց նյութերի արժեքի/	հատ	2.609
39	Կ19-64	Այլ սարքերի և սարքավորումների տեղադրում, խողովակի օդային գլխանցքի վրա /առանց սարքի արժեքի/	հատ	1.222
40	Կ19-69	Հսկիչ-ստուգիչ վահանակի տեղադրում չափսերը, մինչև 400x300մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	5.060
41	Կ19-70	Հսկիչ-ստուգիչ վահանակի տեղադրում չափսերը, մինչև 700x600մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	11.365
42	Կ19-71	Հսկիչ-ստուգիչ վահանակի տեղադրում չափսերը, մինչև 1200x900մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	13.577
43	Կ19-72	Կրակապաշտպան վահանների /թիթեղների/ տեղադրում /առանց նյութերի արժեքի/	մ^2	0.558
44	Կ19-73	Գազամուղի պնեվմոտիկ փորձարկում	100մ	73.069
45	Կ19-74	Գործող գազատարի կտրում տրամագիծը մինչև 50մմ	տեղ	23.999
46	Կ19-75	Գործող գազատարի կտրում տրամագիծը մինչև 100մմ	տեղ	43.372
47	Կ16-134, 135	Գազի գնդիկավոր, կոնաձև խցանավոր փականի տեղադրում, տրամագիծը 15-50մմ /առանց փականի արժեքի/	հատ	3.420
48	Կ16-144	Պողպատե սողնակի տեղադրում, տրամագիծը մինչև 50մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	2.350
49	Կ16-145, 146	Պողպատե սողնակի տեղադրում, տրամագիծը 65,80,100մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	4.271
50	Կ16-147, 148	Պողպատե սողնակի տեղադրում, տրամագիծը 125,150մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	8.942
51	Կ16-117	Սողնակային փականի տեղադրում, տրամագիծը մինչև 50մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	3.420
52	Կ16-118, 119	Սողնակային փականի տեղադրում, տրամագիծը մինչև 65,80,100մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	6.292
53	Կ16-120, 121	Սողնակային փականի տեղադրում, տրամագիծը մինչև 125,150մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	13.048
54	ԷրԷր-84 Ընդ. Դրույթ 2.10 կետ 3(ե)	Ապահովիչ կափույրի տրամագիծը մինչև 50մմ ապամոնտաժում /կազմաքանդում/ կիրառել մոնտաժմանը 0,4 գործակցով, q=0,4, /մոնտաժում*0,4=/)	հատ	2,386
55	հաշվարկ	Վերանորոգման բրիգադի, նյութերի և գործիքների տեղափոխում ավտոտրանսպորտով 5-30 կմ-ի համար /ներառյալ վերադարձը/	լր	7,100
56	հաշվարկ	Ամեն հաջորդ 1 կմ-ի համար ավելացնել	լր	71.0
57	գնի առաջարկ	Գազի ճնշման կարգավորիչ կետի սարքավորումների տեխնիկական վիճակի զննում, սպասարկում, վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	135,000
58	գնի առաջարկ	Գազի ճնշման կարգավորիչ կետի 50 մմ տրամաչափի РДУК տիպի ճնշման կարգավորիչ տեղադրում (նյութի արժեքով)	լր	216,000
59	գնի առաջարկ	Գազի ճնշման կարգավորիչ կետի 100 մմ տրամաչափի РДУК տիպի ճնշման կարգավորիչ տեղադրում (նյութի արժեքով)	լր	269,400
60	գնի առաջարկ	Գազի ճնշման կարգավորիչ կետի ճնշման կարգավորիչի հրամայող սարքի (ոռոտ) տեղադրում (նյութի արժեքով)	լր	61,750
61	գնի առաջարկ	Գազի ճնշման կարգավորիչի /ԳՐՍ/ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	85,000
62	գնի առաջարկ	Գազի ապահովիչ կափույրի /ԳՐՍ/ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	45,000
63	գնի առաջարկ	Գազի զտիչի /ԳՐՍ/ մաքրում և վերանորոգում	լր	20,000
64	գնի առաջարկ	Ճնշման կարգավորիչի հրահանգիչի /ԳՐՍ/ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	15,000
65	գնի առաջարկ	Սողնակային փականի վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	10,000
66	գնի առաջարկ	Գազի խցանային փականի վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի	լր	3,500

			և նյութերի արժեքի/		
67		գնի առաջարկ	Իմպուլսային գծերի փչամաքրում	հատ	1,500
68		գնի առաջարկ	G2.5, G4, G6 տիպի գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	հատ	26,000
69		գնի առաջարկ	G10 G16 Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	հատ	47,500
70		գնի առաջարկ	G25B Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	հատ	53,500
71		գնի առաջարկ	G 25A Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	71,000
72		գնի առաջարկ	G 40 տիպի Elcor-M և Elcor-MU արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	70,500
73		գնի առաջարկ	G 65 Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	84,500
74		գնի առաջարկ	G 100« G160 Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	93,500
75		գնի առաջարկ	Elcor-M/MU Էլեկտրոնային ճշտիչի վերանորոգում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	89,000
			Ընդամենը		**1,408,322**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԳԻՊԱՐ ՍՊԸ» տնօրեն

Ա. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

Ծառայության					
Հ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիր	առավելագույն գինը /ՀՀ դրամ/	Մատուցման	
				հասցեն	ժամկետը **
1	**Գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում, փորձարկում**	ՊՆ զորամասերի ճնշման կարգավորիչ կետերի գազային սարքերի, սարքավորումների վերանորոգում, կարգաբերում, ստուգաչափում և սպասարկում	8 000 000	ՀՀ ՊՆ զորամասեր	**Գնման ժամանակացույց կսահմանվի ֆինանսական միջոցների հատկացման դեպքում**

* Ծառայություններն իրականացվելու են հանրապետության ողջ տարածքում (ՊՆ զորամասերում) նախատեսված առավելագույն գնի սահմաններում, համաձայն հաստատված թերությունների ակտերի և գնման ժամանակացույց օրացուցային գրաֆիկի:

Վճարումն իրականացվում է ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետում բերված բանաձևի համաձայն:

Ծառայությունների բացակայության դեպքում դրանց արժեքը հաշվարկվում է ՀՀ կառավարության 23.06.11թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգով, կիրառելով 2021թ.-ի թիվ 11 տեղեկագրի վերահաշվարկի և ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետում բերված բանաձևով ստացված գործակիցը:

Նյութերի, պատրաստվածքների և սարքավորումների գները փոխհատուցվում են ըստ պատվիրատուի կողմից ընդունվելու օրվա դրությամբ գործող ինֆորմացիոն տեղեկագրի և/կամ/ 04.10.2016թ. ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ՝ «Հաշվարկային փաստաթուղթը և դրա կազմումը» հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերով՝ ըստ ՀՀ կառավարության 23.06.11թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի, կիրառելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետում բերված բանաձևով ստացված գործակիցը:

Նյութերը, պատրաստվածքներն ու սարքավորումները ձեռք են բերվում կատարող կազմակերպության կողմից՝ բացառապես վերանորոգման և սպասարկման աշխատանքներում օգտագործելու համար՝ ըստ շինարարական նորմերի չափորոշիչների:

Նյութերի, պատրաստվածքների, սարքավորումների վրա պետք է կիրառել տրանսպորտային (նյութերի տեղափոխման) ծախսերի մարզային գործակիցները՝ ըստ ՀՀ կառավարության 23.06.11թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի:

Սույն ծառայությունների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ծառայություններն ընդունման օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր:

*** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԳԻՊԱՐ ՍՊԸ» տնօրեն

Ա. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-22-10/6-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*											
Հ/Հ	CPV	անվանումը	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531151/501	**Գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում, փորձարկում**	-	-	-	-		-		-	-		-	-

**** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԳԻՊԱՐ ՍՊԸ» տնօրեն

Ա. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ

Հավելված 3
N ԳՀՄԶԲ-22-10/6-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ԳՀԾՁԲ-22-10/6-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն